Հայ-ֆրանսիական ապակենտրոնացված համագործակցության չորրորդ համաժողովի ամփոփիչ հայտարարություն

Ի շարունակություն 2010թ. ու 2016թ. Երևանում և 2013թ. Վալանսում կազմակերպված նախորդ համաժողովների՝ 2022թ. հունիսի 29-ին և 30-ին Լիոնում կայացավ հայ-ֆրանսիական ապակենտրոնացված համագործակցության չորրորդ համաժողովը։ Լիոնի քաղաքապետարանի, Լիոնի մետրոպոլի, Ֆրանսիայի Միավորված համայնքների (Cités Unies France) և Հայաստանի համայնքների միության համատեղ կազմակերպած այս միջոցառումն անցկացվեց Ֆրանսիայի և Հայաստանի արտաքին գործերի նախարարությունների և Հայաստանի տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության հովանու ներքո։ Կարևոր էր նաև Հայաստանում Ֆրանսիայի դեսպանության, ինչպես նաև Ֆրանսիայում Հայաստանի դեսպանության ներգրավվածությունը։

Ֆրանսիայի և Հայաստանի տեղական ինքնակառավարման մարմինների շուրջ երկու հարյուր ներկայացուցիչ հանդիպեցին՝ մտքեր փոխանակելու ապակենտրոնացված համագործակցության հարցերի շուրջ, կիսելու իրենց փորձը և քննարկելու համագործակցության զարգացման հեռանկարները։

Բարեկամական և համագործակցային մթնոլորտում այդ երկու օրվա փոխանակումների և քննարկումների արդյունքում Հայաստանի և Ֆրանսիայի տեղական իշխանությունները համաձայնեցին հետևյալ եզրակացությունների շուրջ.

1. Վերջին տարիներին ի հայտ եկած հանգամանքները՝ պայմանավորված 44-օրյա պատերազմով, Covid-19 համավարակով և դրանց հետևանքներով, հանգեցրել էին հայ-ֆրանսիական ապակենտրոնացված համագործակցության դանդաղմանը։ Այսօր այս համագործակցությանը նոր թափ հաղորդելու անհրաժեշտություն կա՝ հաշվի առնելով ստեղծված նոր իրավիճակը։
2. Հայաստանի տարածքային կառավարման բարեփոխումները՝ մասնավորապես համայնքների միավորման տեսանկյունից, հիանալի հնարավորություն են ընձեռնում՝ ամրապնդելու կապերը, որոնք միավորում են հայկական և ֆրանսիական համայնքները։
3. Կողմերը պայմանավորվել են զարգացնել ապակենտրոնացված համագործակցությունը՝ փոխադարձ հարգանքի և ընդհանուր շահի վրա հիմնված, բոլոր բնագավառներում, մասնավորապես առողջապահության,

մասնագիտական կրթության, գյուղական համայնքների և գյուղատնտեսության զարգացման, զբոսաշրջության և կայուն ու խելացի քաղաքների («smart city») ոլորտներում՝ հայ-ֆրանսիական տնտեսական համագործակցության 2021-2026թթ. ճանապարհային քարտեզով սահմանված ռազմավարական ուղղություններին համահունչ:

4. Ֆրանսիական և հայկական կողմերը պայմանավորվել են բարելավել իրենց գործողությունների ընդհանուր համակարգումը և իրենց համապատասխան կառավարությունների հետ միասին խթանել ապակենտրոնացված համագործակցության զարգացմանն ուղղված յուրաքանչյուր կողմից սատարման անհրաժեշտությունը:
5. Կողմերը պայմանավորվել են հայ-ֆրանսիական ապակենտրոնացված համագործակցության հաջորդ համաժողովը կազմակերպել երեք տարի հետո Հայաստանում՝ Սյունիքի մարզում:

GRANDLYON la métropole

VILLE DE LYON

cités unies france

MINISTÈRE DE L'EUROPE ET DES AFFAIRES ÉTRANGÈRES
Liberté
Égalité
Fraternité

RÉPUBLIQUE D'ARMÉNIE
MINISTÈRE DES AFFAIRES ÉTRANGÈRES